

վիշտին անասելի խորությունը՝ Տ. Տ. Գեորգ Զ. Մայրագույն Պատրիարքի և Կաթողիկոսի վախճանումին առիթով:

Շառավիղը էջմիածնա Ս. Աթոռի մեծագործ կաթողիկոսներուն, Գեորգ Զ. Կաթողիկոսը խորհրդանշել էր, ամեն բանն առաջ, իրական Հովվապետին, հայ Հովվապետին, որովհետև հարազատ հովիվի ձայնն էր Իրր ու այդ ձայնն էր մեզի համար՝ պատգամ, առաջնորդություն, ուղղություն, վստահություն և հույս:

Ձայնն էր Ան մեր Եկեղեցվո դարավոր հավատքին, որ ներշնչում և ուժ պարգևած է տառապող և թափառական հայուն:

Մեզի համար միաբնություն էր տեսնել, Իրմով իրականացած՝ միասնականացած և կեդրոնացյալ Հայաստանյայց Եկեղեցին, որովհետև հավատացած ենք միշտ, որ համադրող սերն ու միությունը հաջողության և հառադրիմության մեծագույն երաշխիքն են, և երջանկամիշտաակ Հայրապետը հաջողած էր վերախմբել ամենահեռավոր բեկորները էջմիածնա գաղափարին շուրջ՝ լսելի ընելու համար Հովվապետի առաջնորդող ձայնը մինչև մեր հեռավոր երկիրը:

ՄԻՈՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ

(Կաթողիկոսական պատմիքակ
Հարավային Ամերիկայի հայոց)

ՈՉ ԵՎՍ Է ՀԱՅՈՑ ՄԵԺԱԳՈՐԺ ՀԱՅՐԱՊԵՏՔ

Հեռավոր Հարավային Ամերիկայի հայրենասեր հայության անունով, կուգամ սգակիր սիրտով խնամահելու մեր ժամանակի մեծագույն հայ եկեղեցականի խնկելի հոգվոյն առջև, և հանուն մեր վիճակի բարեպաշտ ժողովրդյան՝ ծաղկեպսակ մը դնելու հայ ժողովուրդի մեծագործ Հայրապետի դագադին վրա:

Սուգ է պատեր հայ ժողովուրդի սիրտը, սև է գգեցեր Հայոց Եկեղեցին, որովհետև կորսեցուց իր մեծանուն ու շինարար, հայրենասեր ու ազգասեր Հովվապետը: Ինկա՛վ հայոց նոր Հայրիկը, ինկա՛վ հայության բարեխնամ Հայրը, Հոգևոր ճեմարանի հայրագործով վերատեսուչը, հայ հավատքի խիզախ ու անվեհեր ախոյանը, Հայ Եկեղեցվո հեռատես ու իմաստուն Հովվապետը: Ինկա՛վ նոր ներսես Շինողը, մեր ժամանակի Մովսես Տաթևացին: Ինկա՛վ հայոթյան պաշտելի Հայրը:

Մակայն մահը զինքը ա՛լ ավելի գեղեցկացուց, որովհետև մեծ ու բարի հոգիները կհաղթեն մահվան:

Միացյալ և համադրված Եկեղեցիին ներշնչումն էր Ան. Իր կրոնական հավատքն բխած խաղաղասեր ոգին, անկաշկանդ հայրենասիրությունը, հառազայրող իմաստությունը՝ շարունակեցին ըլլալ Հայաստանյայց Եկեղեցվո ավանդական միաբն ու շունչը. իսկ մենք, արտասահմանի ժողովուրդ ու եկեղեցական, լսեցինք Իր ձայնին ու աշխատեցանք առաջնորդել մեր հոտը նույն միաբնով և շունչով:

Այժմ, ի տես մեր սիրելի Հայրապետի անշնչացած մարմինին և փակ շրթներուն, խորապես կզգանք, թե Հայաստանյայց Եկեղեցին, գրկված իր քաջ Հովվապետեն, կրպասն իր բարձրաստիճան պաշտոնյաներեն, որ ավելի՛ ևս հավաքվին Ս. էջմիածնա Կաթողիկոսին ներքև և միացնեն իրենց ուժը՝ շարունակելու համար սկսված գործը, նո՛ւյն սիրով, նո՛ւյն իմաստությամբ, նո՛ւյն ոգիով և նո՛ւյն խանդավառությամբ, որպեսզի արտասահմանի մեր զավակները շարունակեն լսել քաջ Հովվապետի ձայնին ու Հայրենիքը հանչնա զիրենք և հետևին մեզի:

Տերը անշարժ և անվտանգ պահե Մայր Աթոռը և Ս. Եկեղեցին, ի փառս յուր և ի պայծառություն մեր Հայրենիքին:

Երանաշնորհ Գեորգ Զ. Հայրապետը, արդարև, եղավ «Յաղթող և Ս. Հայրապետ, նման Մեծին Մովսեսի, սին լուսոյ կանգնեալ ի մէջ Հայաստանեայց»:

Ան հաղթահարեց բոլոր դժվարություններուն ու վերականգնեց Մայր Աթոռը իր հին շքեղ փառքին մեջ, վերաբացավ Հոգևոր ճեմարանը, ու եղավ Սփյուռքի պանդոխտ հայության Մովսեսը, ազատարար առաջնորդը դեպի Ավետյաց Երկիրը, դեպի վերածաղկյալ ու վերաշինյալ Հայրենիքը: Իրավամբ Ան եղավ հայ հավատքի լուսեղեն սին մը Հայրենիքի ու արտասահմանի հայության միջև:

Անոր ազնվական հոգին ու մեծ սիրտը միշտ բարախեցին սիրովը հայ ազգին ու Հայրենիքին, սիրովը՝ Իր բոլոր նշան գավակներուն, ի նպաստ Հայրենիքի վերելքին ու վերածաղկումին, ի խնդիր հայ ժողովուրդի արդար դատին ու հայության ապագայի վառ հույսերուն ու իղեպնդներուն: Հայ Եկեղեցին գրկվեցավ իր աստվածային մեծանուն վեհապետեն, շինարար ու բարե-

կարգիչ Հովվապետեն, եռամեծ Ս. Վարդապետեն:

Հանգույցյալ երանաշնորհ Հայրապետը իրավամբ կրնա Պողոս առաքյալին հետ ըսել. «Զբարտ պատերազմ պատերազմեցալ, զընթացսն կատարեցի, զհաւատսն պահեցի: Այսունետե կալ մնալ ինձ արդարութեան պսակն, զոր հատուցէ ինձ Տէր յաւուր

Կարեւոր խոցված սիրտով կուգանք մեր բեմի հայրենակարոտ հայության կողմն մեր ցավակցությունները հայտնելու Մայր Աթոռ սգակիր ու վշտակիր միաբանության:

Եվ ի խորոց սրտի կաղոթենք, որ բարությանց Տերը երջանկահիշատակ Հայրապետի հոգին «հանգուցանէ ի լոյս երեսաց իւրոց,



ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՍԻՈՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ ԴԱՄԲԱՆԱԿԱՆ Է ԿԱՐԴՈՒՄ

յայնմիկ (Պողոսի Բ բուրբ առ Տիմոթ., Գ 7—8): Տարակույսե վեր է, քե երջանկահիշատակ Հայրապետը քաջությամբ մղեց հավատի պատերազմը, իր կյանքի ընթացքը մեծ վաստակով ավարտեց, իր պարտքը լիովին վճարեց հայ ժողովուրդին, և ասկէ վերջ արժանի է փառաց պսակին:

դասաւորելով զնա ընդ սրբազան հայրապետսն Եկեղեցոյ իւրում սրբոյ, յարժանութեան երկնից», և մխիթարե ուրացած և սգավոր Հայ Եկեղեցին, ու կմաղթենք, որ Նղիայի մաշկյակը իջնե Նղիսեի վրա, և Աստուծոյ արժանավոր հաջորդ մը բազմեցնե Լուսավորչի Ս. Արքովին վրա:

ՎԱԶԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱՆՃՅԱՆ

(Առաջնորդ Ռումանիայ բեմի)

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՎՈՒ ԸՆՓՈՒՍԲՐԵՆԵԼԻ ԿՈՐՈՒՍՏԸ

Ծանր է մեր սուգը, խոր է մեր վիշտը, անփոխարինելի է մեր կորուստը: Մեր սիրեցյալ Հայրապետը՝ Ամենայն Հայոց մեծագործ և հայրենակներ Կաթողիկոս Գեորգ Զ. ը ոչ ևս է մեր մեջ:

Դժվար է, շատ դժվար հաշտվիլ այն մըտին հետ, քե այլևս չունինք զԵՆԲԵ Գերագույն Պետ և Առաջնորդ, մահավանդ մեր Եկեղեցվո համար տագնապներով ու մեղ